ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«04» նոյեմբերի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սոցիալական ոլորտի հարգելի աշխատակիցներ

Սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Սոցիալական աշխատողի օրվա առթիվ:

Ձեր աշխատանքը հանդիսանում է մեր հասարակության մարդասիրական և պատասխանատու ոլորտներից մեկը: Դուք մեծ նվիրումով և բարեսրտությամբ աջակցում եք սոցիալական խնդիրներ ունեցող քաղաքացիներին, նպաստում նրանց կյանքի որակի բարելավմանը:

Ձեր հետևողական ու նվիրական գործունեությունը կարևոր ներդրում է պետության սոցիալական քաղաքականության իրականացման գործում:

Իմ անկեղծ շնորհավորանքներն եմ հղում համայնքապետարանի, միասնական սոցիալական ծառայության Ստեփանավանի տարածքային կենտրոնի, ինչպես նաև համայնքում գործող աջակցության կենտրոնների բոլոր մասնագետներին՝ խոցելի խմբերի անձանց ու ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման, նրանց հասարակության լիարժեք ինտեգրման ուղղությամբ իրականացվող հետևողական աշխատանքի համար:

Թող ձեր բարի գործը միշտ գնահատվի, իսկ ձեր աշխատանքը շարունակի բարեբեր արդյունքներ տալ:

Մաղթում եմ ձեզ առողջություն, անսպառ եռանդ և նոր հաջողություններ ձեր պատասխանատու ու կարևոր գործի մեջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**